

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը
 հայտարարում է 2016-2017 ուսումնական տարվա նպաստի ձևով ուսման
 վճարի փոխհատուցմամբ, հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի
 ընդունելությունը՝ հետևյալ մասնագիտությունների գծով

Մասնագիտության դասիչը	Մասնագիտություն	Հեռակա հատկացում
Ը.00.01	Ընդհանուր տնտեսագիտություն. / տեսական տնտեսագիտություն/	1
Ը.00.02.	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում. /գործարար կառավարում, հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարում, մակրոէկոնոմիկա, միկրոէկոնոմիկա, մարքեթինգ, կոմերցիա և բիզնեսի կազմակերպում/	6
Ը.00.03.	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում. / ֆինանսներ, ապահովագրական գործ, բանկային գործ, մաքսային գործ, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում, կառավարչական հաշվառում և աուդիտ, ֆինանսական հաշվառում , վիճակագրություն/ /1 տեղը՝ ԼՂՀ/	9
Ը.00.06.	Միջազգային տնտեսագիտություն	1
Ը.00.08.	Մաթեմատիկական տնտեսագիտություն . /տնտեսական ինֆորմատիկա և տեղեկատվական համակարգեր/	1
Ընդամենը		18

Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

1) Դիմում՝ ՀՊՏՀ ռեկտորի անունով:

2) Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

3) Օտար լեզու ու ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ):

4) Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում:

5) Ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի):

6) Քաղվածք աշխատանքային գրքուկից (առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հոկտեմբերի 29-ը (ներառյալ):

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Հասցե՝ ք. Երևան –25, Նալբանդյան 128

Հեռախոս՝ 593-426

Ռեկտորատ